16. ԳՈՐՏԱՆ ՀԵՔԻԱԹ

Կէղնի, չէղնի թագավոր մե կէղնի, ուրին իրեք հատ տղա։ Թագավոր գավչաթ ղուշկուն կէղնի, ուր տղեքներուն հրաման գիտա, կըսե. «Ելեք ծեղ համար կարգվեքդ»։

Էն տղեքներ լէ գելնին տանքի վրեն ու փետ կթալին, կըսին. «Մեր փետ վին տանքի վրեն պատավ, ընդրա ախչիկ կառնինքդ»։

Մեկի փետ կէրթա կպատի ռեսի տան տանքին, մեկին լա կպատի վըր մաչլիսի տանքին, պղտիկ ախպոր լա կէրթա կպատի գոլի մե պռուկ։

Էնիկ կէրթա կառնե ռեսի ախչիկ, մեկ լա կառնե մեչլիսի ախչիկ, պղտիկ ախպեր լա կէրթա կտեսնա օր հանդե գոլի պռուկ գորտ մե կա։ Կվերցու զգորտ ու կառի իգա, կըսե. «Աստված իգա գորտ ընծի տվեցդ»։

Իդոտկուն ախպրտանք տնաղ կէնին, կըսին. «Գնաց գորտ բերեց, մեր սիրտ կխառնե, արի ընդրնե բաժնվինքդ»։

Կբաժնվին էրկու ախպեր։

Էդ լա կտանի ղուր գորտ կդնե տան աչքունք ու կթորկե, դուռ կփակե, կէրթա ուրին աշխատելու։

Իրկուն աշխատելու տեխեն կբանթողվի, գիգա ուր տուն։ Օր գիգա ուրին դուռ օր կբանա, կտեսնա օր պատ ու առիք Հ'մեն էղերի օսկի ու արծաթ, օրղան-դոշակ դրուկ է, տունը թաթերուկ է,

կերակուր էփուկ ու կիչկե մարթ չկա։ Էդիկ կաճբնա, կըսե. «Էդի ո՞րն է օր էկեր է իմ տուն, էդա հմլեն էրի»։ Կըսե. «Կանի էրթամ իմ գորա իշկիմ»։ Կէրթա կտեսնա օր գորտ նստուկ աչքունք։

Իդոտկուն կմնա մյուս ավուր, կպլուլվի խսուր կանի դռան ետև, կտեսնա օր հանդե գորտ էլավ զուր վերավի գորտվենի շապիկ հանեց, էղավ խուռնիկ-խրեղեն ախչիկ մե։ Տղեն օր տեսավ զախչիկ, խելք գնաց։ Իդոտկուն էդ ախչիկ էլավ էդ տեղրան ավլեց, խորտեց, կերակուր էփեց, էկավ նստավ զուր կերակուր կերավ օր թը էլներ գորտվենի շապիկ հագներ, տղեն խսլի մեջեն էլավ, շապիկ պոնեց կրակի մեջ թալեց ու իրեցեց։

Ախչիկն ասեց.— Քու սովրցողի վիզ կոտրի, հ՞որի՞ իմ շապիկ թալիր կրակի մեջ։

Իդոտկուն ծեն գնաց հասավ տղու պապուն օր թագավոր էր, ըսին թե. «Գորտ էղած է խուռնիկ-խրեղեն ախչիկ մեն»։

Իրկուն գորտ էդ տղին կըսե.— Ես կերակուլ կպատրաստիմ, քու պապ առ էկո գավաթ։

Տղեն կէրթա կառնե զուր պապ ուր հ՞ըռճեքուբարներով գիգան գավաթ։

Թագավոր օր կտեսնա զուր հարս, աչք կթալե հարս։

Թագավոր օցքի գելնե էրթա։

Սարախտան կճամբի տղի ետև, կըսե.— Հմալ ճութ մե հաղող բերիս օր, իմ ասքար ուտին, կես լա մնա տեղ, թե չէ՝ քու վիզ կզարկիմ։

Էդ տղեն զուր նիաթ կկախե ու գիգա տուն, կըսե. «Հե՞յ, աստված, հ՞ուստեն հազող բերիմ օր ըդրտ ասքար ուտին, կես լա մընա տեղ»։

Կնիկն է կհարցու.— Ինչի՞ քու նիաթ կախեր ես։

Էն լէ կվերցու, կըսե.— Թագավոր ընձի տարավ ըսեց. «Հմալ ճութ մե հաղող բերիս, իմ ասքար ուտին, կես լա մնա տեղ»։

Կըսե.— Մի վախենա, առ իդա բալնիք, գնա կանի գոլի պըռուկ, օր կկանիս գոլի պռուկ, բալնիք թալ մեջ գոլին, ըսե. «Մամ խաթուն, Շուշան խաթուն ճութ մի խաղող կուզես». հանդե գիդա ճութ մե խաղող քի, դու կառնիս հ՞իգաս։

Իդոտկուն բալնիք կառնի կէրթա, կանի ճրի պռուկ, բալնիք կթալե մեջ գոլին, կըսե.

— Մամ խաթուն, Շուշան խաթուն ճութ մե հազող կուզես։— Ճրի միջեն տեսավ օր էլավ ճութ մե հաղող, բալնիք լա հեա. տըզեն առավ զհաղող, էկավ։

Կնիկ ըսեց.— Բերեցի՞ր։

Ըսեց.— Հա, բերեցի։

Կտանի գիտա թագավորին զէգ ճութ հազող, թագավորի ասքար կուտին զէդ հազող, կես լա գեվելնա։

Օլոր ավուր թագավոր էլման կխանչե ղտղեն, կտանե, կըսե ուր տղին.

— Հըմալ խալիչե մե բերիս օր փռիմ իմ դիվան, օր էրկու փայ լէ մնա ծալուկ, թ'չէ՝ քու վիզ կղարկիմ։

Տղեն է ըզնիաթ կկախե, գիգա տուն։ Կնիկ կվերցու՝ կըսե.

— Ինչի՞ էդման քու նիաթ կախեցիր։

Կըսե.— Իսնե իմ հեր խալու խալիչե մե կուղե, օր փռե ուր դիվան, էրկու փայ լէ մնա ծալուկ։

Կըսե.— Առ իդա բալնիք, էլման գնա էդ գոլու պռուկ կանի, թալ էդ բալնիք մեջ գոլին, ըսե. «Մամ խաթուն, Շուշան խաթուն զուր չաքմաջեն կուզե»։

Տղեն կէրթա կկանի ճրի պռուկ, բալնիք կթալի մեջ ճրին, կըսե.

— Մամ խաթուն, Շուշան խաթուն չաքմաջեն կուզե։

Տեսավ օր էլման չաքմաջեն ճրի մեջեն էլավ, ջալկեց զչաքմաջեն էկավ։

Բերեց չաքմաջի դուռ բացեց, հանեց խալին մեջեն, տարավ տվեց ուր հեր։ Պարղեց ուր դիվան, էրկու փայ լէ մնաց ծալուկ։

Տղեն խալին կտանե ու գիգա տուն։

Կմնա օլոր ավուր։ Թագավորի կնիկ մեռուկ կէղնի։ Թագավոր կըսե. «Էդ էրկու բան եմ ուզե կբերե, կանի հմալ բան մե ուզիմ օր աղեն չկրնա բերե, ես ընդրա կին պիտի առնիմ»։

Իդոտկուն թագավոր կխանչե զուր տղեն, կբերե, կրսե.

— Գնա, քու մամ սազցու բեր, թե չէ՝ քու գլուխ կղարկիմ։

Տղեն էլման ուր նիաթ կկախե, գիգա տուն։

Կնիկ կըսե.— Հ'որի՞ քու նիաթ էդման կախեր իս։

Կըսե.— Իմ հեր էրկու բան ուզեց տարա, իդոտկուն կըսե. «Գնա քու մամ սազցու բեր». ես իմա՞լ էրթամ մեռուկ տեխեն հանիմ բերիմ։

Կըսե.— Մը վախենա, աստված օղորմած է, առ բալնիք, էլման գնա կանի ճրի պռուկ, թալ բալնիք ճրի մեջ ըսե. «Մամ խաթուն, Շուշան խաթուն զուր փետե ծին կուզե»։

Կառնե զբալնիք, կէրթա։ Կէրթա, կկանի ճրի պռուկ, բալնիք

կթալե ճրի մեջ։ Կտեսնի օր հանդե փետե ծի մե ճրի մեջեն էլավ։ Կառնե ղծին, գիգա տուն։

Իդոտկուն կին ուր իրկան թարիֆ կէնե, կըսե.— Կհեզնաս իդա ծին, ու կէրթաս, կէրթաս էնդիու աշխարք, գելնիս էրկինք՝ քու մամու մոտ։

Տղեն կհեզնա ղծին, կէրթա, կտեսնա, օր հանդե ուր մամ նստուկ է։ Մամ օր կտեսնա տղին, կըսե.

— Սեթ, օրթիս, Սեթ, օրթիս, Հորի՞ն էկար։

Էն լէ կըսե թե.— Իմ պապ ինձի կըսե թե. «Գնա քու մամ սաղցու բե, թե չէ քու վիզ կզարկիմ»։

Մամ գելնա ֆաս մա գիտա տղին, կըսե.— Տար, հանդե քու պապ նստուկ է սորի հ՝առեճ, ըսե՝ «Ուզե ես իտամ». էն լէ կըսե՝ «Տուր». օր ըսեց տուր, դու ֆաս իջու ընդրա գլուխ, քու պապ կէղնի փոշի, կխառնվի սորի փոշեստաներու հետ, հանդե դորիս քո փոխպատ (օձիք) կփրցնա քու պապուց։

Տղեն լա կառնի զֆաս, կդառնա իգա, իգա ուր տուն։

Կնիկ կըսե.— Քու մամ սաղցուցի՞ր բերեցիր։

Կըսե. —Չէ՛, իդա ֆաս ա տվեց ընձի։

Կըսե.— Դե՛, ելի առ զֆաս ու գնա։

Տղեն կառնի զֆաս ու կէրթա. կտեսնա ուր պապ նստուկ է, հանդե սորի հ՝առեճ։ Ուր պապուն կըսե.

— Ուզե՝ տամ։

Պապն է կըսե.— Տո՛ւր։

Օր կըսե տո՛ւր, տղեն ֆաս կիջու պապու գլուխ, պապ կէղնի փոշի, կխառնվի փոշեստաներու հետ։

Տղեն կփրցնա դորուս։ Կփրցնա, պապու թագավորութեն կառնե ուրին, կնստի թախտ, կէղնի թագավոր։

Թաժա յոթն օր կբերե դհոլ զուռնա կզարկե, թաժա զուր հարսնիք կէնե, կփսակվի։

Ըդոնք կհասնին ուրանց մուրազին, մենք լէ հասնինք մեր մուրազին։

Աստծուց պատավ իրեք խնձոր, մեկ քըզի, մեկ ընձի, մեկ լէ ջամաաթին։

---

1 Այստեղ ասացողը հավանաբար բաց է թողել աղչկա խրատը՝ «Մամ խաթուն, Շուշան խաթուն զուր փետե ծին կուզե» բնագրում ջրի մոտ չի ասում վերոհիշյալը (Ս. Կ.)։